«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

27 ապրիլի, 2026 թ. N 8 - Լ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի կանոնադրության 9.2 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի 2025 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված
«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2026թ. ապրիլի 27-ի N 8 - Լ որոշման

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության
Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի
2025թ. տարեկան գործունեության հաշվետվություն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի (այսուհետ՝ ՈՊՊԿ հանձնաժողով) 2025թ. տարեկան գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) հաստատվել է Պալատի խորհրդի 2024 թվականի դեկտեմբերի 16-ի N 32-Լ որոշմամբ:

ՈՊՊԿ հանձնաժողովի 2025 թվականի տարեկան գործունեության վերաբերյալ սույն հաշվետվությունը պատրաստվել է ի կատարումն ՈՊՊԿ հանձնաժողովի կանոնադրության 9.2 կետի, ըստ որի ՈՊՊԿ հանձնաժողովը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 31-ը, նախորդ տարվա իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Պալատի խորհրդին:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Գործունեության ծրագրի 1-ին կետով նախատեսված է եղել իրականացնել որակի պահանջների պահպանման արտաքին գնահատման արդյունքների ուսումնասիրություն, գնահատման արդյունքների հիման վրա առաջարկվող գնահատականի վերաբերյալ դիրքորոշման ձևավորում, Պալատի խորհրդին ներկայացում գնահատականի վերաբերյալ:

   <u>Կատարված աշխատանքը</u>

   Որակի պահանջների պահպանման արտաքին գնահատման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ուսումնասիրություն, դիրքորոշման ձևավորում և ներկայացում Պալատի խորհրդին հետևյալ անձանց վերաբերյալ՝

N	Կազմակերպության անվանում	Առաջարկված գնահատական	Կարգապահական պատասխանատվության միջոցի կիրառման առաջարկ
1.	*«Մելիքյանս ընդ քո» ՍՊԸ*	*2 «երկու»*	*Նախազգուշացում*
2.	*«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ*	*3 «երեք»*	*Տուգանք՝ 500 000 ՀՀ դրամի չափով*
3.	*«Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ*	*3 «երեք»*	*Տուգանք՝ 500 000 ՀՀ դրամի չափով*
4.	*«Պրոգրես Աուդիտ» ՓԲԸ*	*3 «երեք»*	*Տուգանք՝ 500 000 ՀՀ դրամի չափով*
5.	*«Ջի Փի Մենեջմենթ Ըդվայզերի» ՍՊԸ*	*2 «երկու»*	*Նախազգուշացում*
6.	*«Փի Էյջ Փի Փարթնըրզ» ՓԲԸ*	*3 «երեք»*	*Տուգանք՝ 500 000 ՀՀ դրամի չափով*
7.	*«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ*	*1 «մեկ»*	*Չկիրառել*
8.	*«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի*	*2 «երկու»*	*Նախազգուշացում*

2. Գործունեության ծրագրի 2-րդ կետով նախատեսված է եղել իրականացնել Պալատի անդամների կողմից մատուցվող հաշվապահական և աուդիտորական ծառայությունների շրջանակներում և դրանց հետ կապված գործողությունների (անգործության) վերաբերյալ ստացված բողոքների՝

   ա) քննում՝ բողոքների ստացումից հետո 10 օրյա ժամկետում,

   բ) Պալատի անդամների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ Պալատի խորհրդին առաջարկությունների ներկայացում՝ բողոքների քննումից հետո 3 օրյա ժամկետում,

   <u>Կատարված աշխատանքը</u>

   Գործունեության ծրագրի 2-րդ կետի շրջանակներում աշխատանքներ (միջոցառումներ) չեն իրականացվել, քանի որ 2025 թվականի ընթացքում Պալատի անդամների կողմից մատուցվող հաշվապահական և աուդիտորական ծառայությունների շրջանակներում և դրանց հետ կապված գործողությունների (անգործության) վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել ՈՊՊԿ հանձնաժողովին:

3. Գործունեության ծրագրի 3-րդ կետով նախատեսված է եղել իրականացնել Պալատի Անդամակցության հանձնաժողովի կողմից իրականացրած՝ Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական

զարգացմանը վերաբերող հաշվետվությունների ընտրանքային ուսումնասիրությունների արդյունքների՝

ա) դիտարկում՝ արդյունքների ստացումից հետո 5 օրյա ժամկետում,

բ) դիտարկման հիման վրա Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ Պալատի խորհրդին առաջարկությունների ներկայացում՝ արդյունքների դիտարկումից հետո 3 օրյա ժամկետում:

<u>Կատարված աշխատանքը</u>

Գործունեության ծրագրի 3-րդ կետի շրջանակներում աշխատանքներ (միջոցառումներ) չեն իրականացվել, քանի որ 2025 թվականի ընթացքում Պալատի Անդամակցության հանձնաժողովի կողմից Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացմանը վերաբերող հաշվետվությունների ընտրանքային ուսումնասիրությունների արդյունքում ՈՊՊԿ հանձնաժողովի քննությանը դիմումներ չեն փոխանցվել:

4. Գործունեության ծրագրի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված է եղել Պալատին անդամակցող աուդիտորական կազմակերպությունների (Պալատի կորպորատիվ անդամների) ներկայացուցիչների հետ կազմակերպել հանդիպում-քննարկումներ՝ որակի արտաքին գնահատման գործընթացի ընթացիկ վիճակի վերաբերյալ իրազեկման նպատակով:

<u>Կատարված աշխատանքը</u>

Գործունեության ծրագրի 4-րդ և 5-րդ կետերի շրջանակներում 2025 թվականի Դեկտեմբերի 19-ին կազմակերպվել և անցկացվել է Որակի վերահսկմանն առնչվող խնդիրների վերաբերյալ մասնագիտական քննարկում: Մասնագիտական քննարկմանը հրավիրվել են մասնակցելու Պալատի անդամ աուդիտորները, աուդիտորական կազմակերպությունների ղեկավարները և աշխատակիցները:

5. Գործունեության ծրագրի 6-րդ կետով նախատեսված է եղել Պալատի կանոնադրությամբ և Պալատի խորհրդի կողմից հաստատված կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման կարգով նախատեսված դեպքերում Պալատի ընդհանուր ժողովի և (կամ) Պալատի խորհրդի կողմից կայացված որոշումների և (կամ) հանձնարարությունների կատարում:

<u>Կատարված աշխատանքը</u>

Գործունեության ծրագրի 6-րդ կետի շրջանակներում աշխատանքներ (միջոցառումներ) չեն իրականացվել, քանի որ Պալատի ընդհանուր ժողովի և (կամ) Պալատի խորհրդի կողմից լրացուցիչ հանձնարարություններ ՈՊՊԿ հանձնաժողովին չեն տրվել:

Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ **Դավիթ Եդիգարյան**